

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց
2017-2018 ուսումնական տարի
6-9-րդ դասարաններ
Ուսումնական պլան**

Բովանդակություն	Շաբաթական ժամաքանակը			
	VI	VII	VIII	IX
Ընդհանուր բաղկացուցիչ				
Մայրենի	5			
Հայոց լեզու		3	3	3
Գրականություն		2	2	2
Անգլերեն	2	2	2	3
Ռուսերեն	2	2	2	2
Մաթեմատիկա	5	5	5	5
Բնագիտություն	2			
Քիմիա		1	1	1
Ֆիզիկա		1	1	1
Կենսաբանություն		1	1	1
Աշխարհագրություն		1	1	1
Պատմություն	2	2	2	2
Հասարակագիտություն			1	1
Արվեստ	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	2	2
Ֆիզկուլտուրա և անվտանգ կենսագործ.	3	3	3	3
Ընդհանուր պարապմունք				
Ռազմա-մարզական ճամբար				5 օր (տարեկան)
Սովորողի ընտրած գործունեություն	4	4	4	4
Ընդամենը	29	31	32	33
Լրացուցիչ կրթություն				
Տնային ուսումնական աշխատանք				
Լրացուցիչ ուսուցման դասընթաց (ներ)				

Ուսումնական պլանի պարզաբանումներ

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:
2. 6-9-րդ դասարան [ընդունվում է](#) այն սովորողը, որ իր ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ ընտրում է Ծրագիրը, [սահմանված կարգով](#) պայմանագիր կնքում ուսումնառության մասին: Ընդունելությունը կատարվում է [«Մուտք կրթահամալիր»](#) ուսումնական ճամբարով:
3. Դասարանում սովորողների թիվը 20-25 է: Սովորողի [ընտրությամբ գործունեությունը](#) կազմակերպվում է 12-15 հոգիանոց խմբերով:
4. Ուսումնական պլանը կազմված է ընդհանուր, սովորողի ընտրությամբ բաղկացուցիչներից:
5. Սովորողի ուսումնական գործունեությունը կազմակերպվում է անհատական ուսումնական պլանով, որը սահմանված կարգով կազմվում է ուսումնական չորս շրջանների համար, այս ուսումնական պլանի հիման վրա:
6. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված [կարգերը](#) ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
7. Ուսուցումը կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, ակումբի, սովորողի ընտրությամբ գործունեության, լրացուցիչ կրթության, ուսումնական նախագծերի) [ուսումնական օրացույցով](#): Դրանցով որոշվում են ուսումնական պարապմունքները և ճամբարները, ստուգատեսները, ծեսերը և տոները, ստեղծագործական այլ հավաքները:
8. Ուսումնական տարին սկսվում է 2017թ. օգոստոսի 30-ին, կազմված է չորս շրջանից՝
 - առաջին՝ 2017թ. օգոստոսի 30-2018թ. հունվարի 8,
 - երկրորդ՝ հունվարի 9-հունվարի 29,
 - երրորդ՝ հունվարի 30-մայիսի 28,
 - չորրորդ՝ մայիսի 29-հունիսի 15:

9. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Ծնողի համաձայնությամբ շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, ուսումնական-հասարակական նախագծեր:
10. 2018թ. հունվարի 9-ից 26-ը, մայիսի 29-ից հունիսի 8-ը կրթական ծրագիրը, սահմանված կարգով, կազմակերպվում է նախագծային ուսուցման ճամբարում:
11. 2017թ. սեպտեմբերի 4-8-ը, նոյեմբերի 13-17-ը, 2018թ. ապրիլի 2-6-ը, մայիսի 14-18-ը կրթական ծրագիրը կազմակերպվում է նախագծային ուսուցման ստուգատեսով:
12. 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը, 2017թ. դեկտեմբերի 25-ից մինչև 2018թ. հունվարի 7-ը, մարտի 26-ից ապրիլի 1-ը, հունիսի 18-ից օգոստոսի 29-ը սովորողին տրվում է արձակուրդ: Այդ շրջաններում ուսուցումը, որպես լրացուցիչ կրթություն, կազմակերպվում է «Ուսումնական արձակուրդ» նախագծով:
13. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Սովորողը դպրոց է գալիս սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական ներթուրք-նորթուրք-պլանշետով, տանն ունի համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովվում է անլար համացանցից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
14. Մեդիագրադարանը, դպրոցական գրադարանը, դասավանդողի բլոգը սովորողին սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
15. Ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պարապմունքների տարբեր ձևերի, ուսումնական նախագծերի մշակման և իրականացման, ուսումնական ճամփորդությունների, ճամբարների, ստուգատեսների միջոցով:
16. [Ուսումնական պարապմունքները սահմանված կարգով](#) կազմակերպվում են հիգիենիկ միջավայրում, այդ թվում՝ բացօթյա:
17. Սովորողների կարողություններին և պահանջունքներին համապատասխան կրթական ծրագիրն իրականացվում է առկա, [հեռավար](#) ձևերով:
18. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, ճամբարներին, ճամփորդություններին, ստուգատեսներին, ֆլեշմոբներին, նախագծերին մասնակցությունը, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ [էլեկտրոնային գրանցում](#) են ստանում:
19. Ուսումնական գործունեության ընթացքում սովորողն աշխատում է տեքստային խմբագրով, կարողանում է ներկայացում կազմակարգել, ֆիլմ, ռադիոնյութ ստեղծել, կիրառում է որոնողական ծրագրեր, մոնտաժային ծրագիր, էլեկտրոնային բառարաններ, էլեկտրոնային քարտեզներ, դասընթացների ծրագրերով որոշված կիրառական այլ ծրագրեր, օգտվում է համացանցային տարածքներից՝ one drive, google drive, dropbox և այլ: Կարողանում է սեփական նյութերը համացանցում տարածել: Ծանոթանում է տեղեկատվության օգտագործման բարոյական նորմերին:
20. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերն իրականացվում են սահմանված կարգով:
21. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական ներքին, արտաքին տարածքների, գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունք են:
22. Անձնական ուսումնական բլոգի (կայքի) սահմանված կարգով վարումը սովորողի և դասավանդողի համար [պարտադիր ուսումնական աշխատանք է](#):
23. [Կրթահամալիրի, դպրոցի](#) կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը սովորողի ուսումնական աշխատանք է:
24. Ծրագրի ամենօրյա 15 րոպե տևողությամբ [ընդհանուր պարապմունքը](#)՝ սահմանված կարգով և ծրագրով, սովորողի համար լրացուցիչ կրթական ծրագիր է:
25. «Մայրենի լեզուն», «Հայոց լեզուն», «Գրականությունը» ներառում են գրաբարի ուսուցում:
26. «Մաթեմատիկան» կազմված է 6-րդ դասարանում՝ «Մաթեմատիկա», «Մաթեմատիկա և երևակայություն», 7-9-րդ դասարաններում՝ «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Մաթեմատիկա՝ առանց բանաձևերի» դասընթացներից:
27. «Կենսաբանություն» առարկան կազմված է «Բուսաբանություն և բույսերի խնամք», «Կենդանաբանություն և կենդանիների խնամք», «Մարդու կազմախոսություն և մարմնի խնամք» դասընթացներից, որոնք ներառում են էկոլոգիայի բաղկացուցիչ և ուսուցանվում փորձի հիման վրա:
28. «Բնական գիտություններ» բնագավառի դասընթացների ուսուցումը կազմակերպվում է լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա, բնագիտական ու բնապահպանական աշխատանքների, էկոլոգիական, աշխարհագրական, երկրագիտական, կենսաբանական, աստղագիտական ուսումնական նախագծերով: Ֆիզիկայի, քիմիայի ուսումնական պարապմունքի ժամանակ դասարանը բաժանվում է երկու խմբի:
29. Օտար լեզուները գործնական կիրառություն ունեն մյուս ուսումնական պարապմունքներին:
30. «Տեխնոլոգիա» առարկան կազմված է «Տնային տնտեսվարություն», «Միջավայրի խնամք և բարեկարգում», «Պարտեզի խնամք», «Դիզայն», «Առողջագիտություն, առաջին բուժօգնություն», «Մեդիատեխնոլոգիաներ», «Դիզայն-խեցեգործություն», «Բույսերի խնամք», «Կենդանիների խնամք» դասընթացներից, կազմակերպվում է ձեռների, տոների, ցուցադրությունների, տոնավաճառների, սպասարկման (հերթապահության) ուսումնական նախագծերի ձևով: Ուսումնական պարապմունքի ժամանակ դասարանը բաժանվում է երկու խմբի:
31. «Արվեստ» առարկան կազմակերպվում է երաժշտության, պարի ուսուցման, արվեստի տարբեր տեսակների վերաբերյալ ուսումնական նախագծերի, ձեսի, տոնի, համերգի, ցուցադրության կազմակերպման ուսումնական նախագծերի միջոցով:
32. «Պատմություն», «Արվեստ» դասընթացների մեջ, «Ընթերցում ենք գրաբար» ուսումնական նախագծերում ներառված են նաև «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի համապատասխան բաղադրիչները:
33. «Ֆիզիկական կրթություն, ՆՁՊ և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը 6-9-րդ դասարաններում ներառում է սովորողի ընտրած անհատական կամ թիմային մարզաձևի պարապմունքները, մրցումները, ռազմա-մարզական խաղերը, սահմանված կարգով ռազմա-մարզական դաշտային ճամբարի կամ հավաքի մասնակցություն: Սովորողին առաջարկվող մարզական ակումբներն են նետաձգություն, սուսերամարտ, մարմնամարզություն, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ձեռքի գնդակ, սեղանի թենիս, հրաձգություն: Որպես լրացուցիչ կրթության մարզական ակումբ՝ սովորողը կարող է ընտրել լող, սեղանի թենիս, հեծանվավարություն, եռամարտ, ծիվարություն, մարզական այլ ակումբի պարապմունքներ: Կրթահամալիրում կամ կրթահամալիրից դուրս որևէ մարզաձևի լրացուցիչ կրթության ծրագրում ընդգրկված սովորողը կարող է կրթահամալիրում մարզական-ակումբային պարապմունքների չմասնակցել: Անվտանգ գործունեության հմտություններ սովորողը գործնական եղանակով ձեռք է բերում բազմամարտի նախագծերի, քայլարշավների, բարձունքներ հաղթահարելու, վրանային ճամբարների ժամանակ: 9-րդ դասարանի սովորողը տարվա ընթացքում 5 օր մասնակցում է ռազմամարզական ճամբարի:
34. 6-9-րդ դասարանի սովորողն իր ընտրությամբ շաբաթական 4 ժամ իրականացնում է առարկայական նախագծեր՝ քերականության, մաթեմատիկական, բնագիտական (ֆիզիկոսի, քիմիկոսի, կենսաբանի, աստղագետի), ինժեներական-տեխնիկական, կինո-ֆոտոյի, մեդիալրագրության, օտար լեզվի (գերմաներեն, վրացերեն, պարսկերեն, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, հունարեն, իսպաներեն)-թարգմանչության, կենդանիների և բույսերի խնամքի, վայրի բույսերի հավաքման-մշակման, պարտիզայնի, կերպարվեստի-դիզայնի-մոդելավորման-քանդակի, պատմաբան-հնագետ-

ազգագրագետի, երգչախմբային, մարզական, արհեստավորի (այդ թվում՝ նաև բրուտի, պարտիզպանի, խոհարարության, կարուձևի) գործունեություն: Սովորողը կարող է ընտրել նաև կրթահամալիրի [պատանեկան ակումբներից](#) մեկը, ձևավորել նոր ակումբ:

35. Սովորողի [տնային աշխատանքը](#) բաղկացած է նրա ընտրած (անհատական ուսումնական պլանով) դասընթացների առաջադրանքներից, ամենամսյա առարկայական ֆլեշդոբներից, ուսումնական նախագծի աշխատանքից:
36. [Սահմանված կարգով](#) իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների, ակումբային գործունեության, ընտրությամբ գործունեության, ուսումնական նախագծի բաղկացուցիչն են:
37. Տեղական շրջան Հայաստանից բացակայած սովորողների համար կրթական ծրագիրը [սահմանված կարգով](#) կարող է կազմակերպվել անհատական ծրագրերով:
38. Լրացուցիչ կրթությունը կազմակերպվում է կրթահամալիրի դպրոցներում, ուսումնական կենտրոններում՝ սովորողի ծնողի հետ կնքվող լրացուցիչ կրթության պայմանագրով, որպես ուսումնառության պայմանագրի հավելված, սահմանված կարգով: Սովորողը կարող է լրացուցիչ ուսուցման դասընթաց ստանալ նաև կրթահամալիրից դուրս, սահմանված կարգով:
39. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և սահմանված կարգով ներկայացվող էլեկտրոնային հաշվետվություններում:
40. Կիրառվում են [գնահատման տարրեր ձևեր](#), որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի: Ըստ ուսումնական շրջանների սովորողի ուսումնական գործունեության՝ սահմանված կարգով կատարվող գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած, իր ուսումնական բլոգում հրապարակած աշխատանքները (այդ թվում՝ հետազոտական-ստեղծագործական-թարգմանական աշխատանք, ուսումնա-հասարակական նախագծերի, ուսումնական ճամփորդությունների, հայրենագիտական արշավների նյութեր, առաջադրանքների կատարում, լրացուցիչ կրթության նյութեր, ուսումնական նախագծերի, ուսումնական շրջանների հաշվետվություններ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցության նյութեր): Խրախուսվում է սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը և հրապարակայնացումը մեդիայի միջոցով:
41. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները [սահմանված կարգով](#) ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, համերգներում, ստեղծագործական հավաքներում:
42. 9-րդ դասարանի վերջում սովորողները հանձնում են ավարտական քննություններ՝ ՀՀ ԿԳ նախարարության սահմանած կարգով: